Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

791-6

Հ.Հ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ № 4

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԸ ՅԵՎ ՓՈԽՈՒԳԿՈՄՆԵՐԸ

ՀՍՍՀ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպվար 91բ. Տիրաժ 1300.

Տպարան «Հերմես» Հրատարակչության, Մարքսի փող. № 29.

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ!

Գյուղատնտեսության ամրապնդման և զարգացման հարցը ներկայումս առաջնակարգ խնդիրներից մեկն է հանդիսանում։ Վերածնվող գյուղացիական տնտեսության հետագա վերելքին նպաստելու համար Խորհրդային պետության կողմից ստեղծված է գյուղատնտեսական վարկի սիստեմը, որի ստորին կազմակերպությունները տեղերում հանդիսանում են վարկային ընկերությունները։

Վարկային ընկերությունների նպատակն է եժան վարկ տալ աշխատավոր գյուղացիությանն իր տնտեսությունը բարելավելու համար։

Բայց գյուղացիությանը միայն փոխառություն տալը բավական չե։ Անհրաժեշտ է աշխատավոր գյուղացիության վարկավորման գործը դնել այնպիսի հիմքերի վրա, որ կարիքավոր գյուղացին ոչ միայն վարկային ոգնություն ստանա, այլ և անհրաժեշտ է, որ տրվող վարկը իր նպատակին ծառայի, գործադրվի գյուղացու տնտեսության վրա, և տնտեսությանն ոգուտ տալով, միաժամանակ հնարավորություն ստեղծի նրա համար վերադարձնելու ստացած փոխառությունը։

Վարկային ընկերությունները տեղերում այդ աշխատանքը հաջողությամբ կարող են կատարել այն դեպքում, եթե գյուղում աշխատող կազմակերպությունները, և առաջին հերթին գյուղացիական հասարակական մարմինները ոգնության գան վարկային ընկերություններին։ Այդպիսի հասարակական կազմակերպություններից են մեր գյուղում գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերու-

թյունները, վոր գյուղացիական հասարակականության զարգացման կարեվորագույն խթաններից մեկն են հանդիսանում և վորոնք ստեղծված են իրեն, աշխատավոր գյուղացիության ձեռքով՝ գյուղի աշխատավոր տարրերին ոժանդակություն ցույց տալու համար։

Գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերությունները հնարավորություն կունենան իրական աջակցություն ցույց տալու վարկային ընկերություններին այն դեպքում միայն, յեթե այդ ընկերությունների և վարկային ստորին ցանցի միջև սերտ կապ ստեղծվի, յեթե գյուղում գործող այդ կարևոր կազմակերպությունները մշտական շփումն ունենան միմիանց հետ։

Վարկային ընկերությունների և փոխոգնությունների մերձեցման և համագործակցության խնդիրը վաղուց արդեն ուշադրության եր արժանացել յերկու կազմակերպությունների բարձրագույր մարմինների կողմից և իր լուծումն ե ստացել փոխոգնությունների համահայաստանյան 2-րդ համագումարի բանաձևում և ՀՍԽՀ Գյուղատնտեսական Բանկի և Հայկենսոփոխոգնության միջև կնքված համաձայնագրում։

Ինչպես մատնանշված ե բանաձևում, այդպիսի մոտավոր կապ ստեղծելու համար անհրաժեշտ ե, վոր փոխոգնությունները և վարկային ընկերությունները փոխադարձաբար տեղեկություններ տան միմիանց իրենց գործունեության, իրենց միջոցների, իրենց ծրագրների և մտադրությունների մասին։ Անհրաժեշտ ե, վոր փոխոգնությունները և վարկային ընկերությունների վարչությունները փոխադարձաբար զեկուցումներ տան միմիանց իրենց ժողովներում ու նիստերում, և պարզաբանեն այն բոլոր հարցերը, վոր անմիջական կապ ունեն յերկու կազմակերպությունների գործունեության հետ։ Նմանապես անհրաժեշտ ե, վոր վարկընկերությունների ընդհանուր ժողովներում փոխերից ներկայացուցիչներ ընտրվեն վարկընկերությունների վարչության և խորհրդի կազմի մեջ, ինչպես և փո-

վերի չքավոր անդամներից վստահություն վայելող անձինք առաջ քաշվեն վարկընկերությունների ղեկավար մարմիններում։

Վորպեսզի վարկընկերությունների և փոկերի կապը ամրապնդվի նաև ձևական հիմունքներով, անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր փոկ անդամագրվի վարկընկերությանը։ Վարկընկերությունները նոր անդամներ ընդունելիս, պետք է առաջին հերթին ընդունեն փոկերի անդամներից։

Վարկային ընկերությունների համար շատ կարևոր է իմանալ գյուղի աշխատավորության գլխավոր կարիքները, ճանաչել ճշտապահ և պարտաճանաչ գյուղացիներին, վորպեսզի նրա համեմատ էլ վարկաբաշխում կատարեն, վորովհետև վարկային ընկերությունը չի կարող իր սուղ միջոցներից վարկ տալ անբարեխիղճ գյուղացուն, վորը ժամանակին չի վերադարձնի ընկերության գումարները և դրանով կը զրկի իր հարևանին վարկային ոգնությունից։ Իսկ այդպիսի տեղեկություններ գյուղացիների մասին ամենից լավ կարող է տալ փոխոգկոմը, վորը լավ ճանաչում է իր անդամներին։ Ի հարկե, դրանից բնավ չը պետք է յեզրակացնել այն, վոր փոկերը կարող են միջամտել վարկային ընկերությունների զուտ գործառնական աշխատանքներին։ Այդ հարցի մանրամասն պարզաբանությունը տրված է բանաձևում, վորի վրա առանձնապես հրավիրում ենք Ձեր ուշադրությունը։

Բայց այդ բոլորը բավական չե։ Վորպեսզի գյուղատնտեսության վարկավորման գործը կանոնավոր հիմքերի վրա դրվի, վորպեսզի վարկավորման աշխատանքների ապարիզում յերկվություն չը լինի, և գյուղացիությունը ժամանակին վերադարձնի իր վերցրած փոխառությունները, յերկու կազմակերպությունների ղեկավար մարմինները փոխադարձ համաձայնությամբ վորոշել են՝ 1. Փոխոգկոմների ժամանակավորապես ազատ միջոցները կենտրոնացնել վարկային ընկերություններում, իբրև ավանդ,

մի հանգամանք, որը մի կողմից կը նպաստի վարկընկերությունների ֆինանսական դրության ամրապնդմանը, և մյուս կողմից կապահովի փոկերի միջոցները կորստից և միաժամանակ շահ կը տա նրանց. 2. Նույն նպատակով ռեալիզացիայի յենթարկել փոկերի որամատրության տակ յեղած ապրանքները և դրանից գոյանալիք գումարները ավանդ մուծել վարկընկերությունները, ըստ որում ռեալիզացիայի աշխատանքներին վարկընկերությունները պետք է առանց վարձատրության լայն աջակցություն ցույց տան, 3. Որ վարկընկերությունները, վարկաբաշխում կատարելիս, նկատի առնեն փոկերի ցուցմունքներն այդ մասին և մյուս կողմից փոկերն իրենց վարկային աշխատանքը կատարեն վարկընկերությունների ապարատի միջոցով, որպիսի խնդիրը մանրամասն պարզաբանված է բանաձևի և համաձայնագրի մի շարք կետերում, 4. Որ ընկերությունները ձևակերպեն փոկերի տված ժամկետանց փոխատվությունները և գանձեն այն։

Համաձայնագրում առանձին տեղ է գրավում գյուղի չքավորության վարկավորման խնդիրը։ Այդ առթիվ որոշված է նախ՝ չքավորական ֆոնդի բաշխման հանձնաժողովների մեջ ընտրել փոկերի ներկայացուցիչներից, յերկրորդ՝ որ փոկերն իրենց միջոցներից որոշ գումար մուծեն չքավորական ֆոնդը, յորրորդ՝ որ փոկերն իրենց չքավոր անդամների փոխարեն փայավճար մուծեն Վարկընկերությունները և չորրորդ՝ որ փոկերը հսկեն, որ իրենց անդամները ընկերություններից ստացած փոխատվությունները իրենց նպատակին ծառայեցնեն և ժամանակին ել վերադարձնեն այն։ Այնուհետև որոշված է, որ փոկերն իրենց մի շարք բանկային բնույթ կրող գործառնությունները, և մասնավորապես փոխադրական գործառնությունները կատարեն վարկընկերությունների միջոցով։

Բացի դրանից, մենք գիտենք, որ շատ տեղերում

վարկային ընկերություններին կից գործում են զանազան արտադրական ձեռնարկություններ (տրակտորային բազա, սերմզտիչ կայաններ, վերանորոգող արհեստանոցներ և այլն), իսկ մյուս կողմից նման ձեռնարկություններ գոյություն ունեն փոխոգկոմներին կից, որ նպատակ ունեն հարմարություններ ստեղծել գյուղացիության համար՝ նրանց գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում։ Վորպեսզի այդ ձեռնարկությունները լայն չափով ոգտագործվեն գյուղի չքավորության կողմից, անհրաժեշտ է, որ փոխոգկոմներն ոգնություն հասցնեն իրենց անդամներին այդ հարցում դյուրություններ տալով նրանց այդ ձեռնարկություններից ոգտվելու համար։ Մյուս կողմից, վարկային ընկերությունները պետք է հնարավորության սահմաններում վարկավորեն փոխոգկոմներին կից գործող այն արտադրական ձեռնարկությունները, որոնք կազմակերպված են փոխոգնության և հասարակական աշխատանքների հիմունքներով՝ նրանց աշխատանքներին զարկ տալու նպատակով։ Միաժամանակ անհրաժեշտ է, որ այն վայրերում, որտեղ վարկային ընկերությունները կամ փոխոգկոմները արտադրական ձեռնարկություններ ունեն, հակառակ կողմերը չը ստեղծեն նման ձեռնարկություններ, նպատակ ունենալով այդ աշխատանքի ասպարիզում յերկվությունից խուսափելը։

Այսպիսով, վորպեսզի գյուղի չքավորության վարկավորման գործը ամուր հիմքերի վրա դրվի, վորպեսզի այդ աշխատանքը հաջողությամբ պսակվի, անհրաժեշտ է վարկային ընկերությունների և փոխոգկոմների համերաշխ գործակցությունը, նրանց միահամուռ ջանքերը աշխատավոր գյուղացիության տնտեսական դրությունը բարելավելու համար։

Իսկ այդ նպատակն իրագործելու համար, անհրաժեշտ է, որ վարկային ընկերությունները և փոխոգկոմները ճշտությամբ կատարեն այն վորոշումներն ու փոխադարձ

պարտավորությունները, որ ընդունել են Հայաստանի Գյուղատնտեսական Բանկը և փոխոգկոմների կենտրոնական Կոմիտեն։ Ի կատարումն փոխոգկոմների համահայաստանյան 2-րդ համագումարի վորոշումների, տեղերում ծագելիք վիճելի հարցերի առթիվ անհրաժեշտ է դիմել յերկու կազմակերպությունների ղեկավար կենտրոններին բացատրություն ստանալու համար։

ՀՍԽՀ Գյուղատնտեսական Բանկի Վարչության Նախագահ Ռ. ՍԱՔՐԱԶԲԵԳՅԱՆ

Սոցապժողկոմ յեվ Հայկենտփոխոգկոմի Նախագահ Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ „ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԸ" ՁԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Գյուղի չքավոր շերտերի տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու գործում փոխոգկոմներն ու գյուղվարկի սիստեմը, վերջին հաշվով մի հիմնական նպատակ են հետապնդում՝ ի մի համախմբել չքավորության տնտեսական ոժանդակմանը նպաստող բոլոր ջանքերը, դնելով նրանց տնտեսական վերելքը զարգացման սոցիալիստական հունի մեջ։

Առաջադրված խնդիրներն իրագործելու նպատակով անհրաժեշտ է այդ յերկու մարմինների կենտրոնական և տեղական կազմակերպությունների փոխադարձ սերտ կապը։ Այս նպատակին հասնելու համար, փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների համահայաստանյան 2-րդ համագումարը ընդգծում է հետևյալ անհրաժեշտ միջոցները։

1. Ստեղծել տեղերում ինֆորմացիոն ձևի փոխադարձ զեկուցումների կարգ, ըստ որում վարկային ընկերությունների վարչությունները զեկուցումներ են անում փոխոգկոմների և փոկընկերությունների ժողովներում, իրենց հերթին փոխոգկոմներն ել իրենց գործունեության մասին զեկուցումներ են տալիս վարկային ընկերությունների ընդհանուր ժողովներում, ինչպես և նրանց վարչության ու խորհրդի նիստերում։

2. Անհրաժեշտ գտնել վարկընկերությունների ընդհանուր ժողովներում փոկերից ներկայացուցիչներ ընտրել վարկընկերությունների վարչության և խորհրդի մեջ։

3. Փոխոգնության ընկերությունների չքավոր անդամներից վստահություն վայելող անձանց առաջ քաշել վարկընկերությունների վարչական և ղեկավար մարմիններում։

4. Գյուղբանկում և վարկային ընկերություններում, չքավորական ֆոնդի բաշխման հանձնաժողովներ կազմելիս փոխոգկոմներից ներկայացուցիչներ ընտրել։

5. Միանգամայն անթույլատրելի համարել փոկերի միջամտությունը վարկային ընկերությունների կազմակերպչական և օպերատիվ աշխատանքներին, որպիսի հանգամանքը անկասկած կը թուլացնի վարկընկերությունների ինքնագործունեությունը, ու խոչընդոտ կը հանդիսանա վերջիններիս ծրագրային աշխատանքներին։

6. Անհրաժեշտ է նաև վերջ տալ այն սխալ թեքումներին, որ հայտնաբերում են մի շարք փոկեր՝ վարկավորման աշխատանքներին նպաստավորման ձև տալով։ Փոկերի միջոցներից գյուղացիության վարկավորման շրջանում որվելիք վարկերը ձեվակերպել բանկային սկզբունքներով՝ առաջնորդվելով վարկի վերադարձման անհրաժեշտությամբ։

7. Փոխոգկոմներն իրենց անդամների վարկավորումը պետք է կատարեն տեղական վարկային ընկերությունների միջոցով, նախապես մուծելով համապատասխան գումարներ։ Նման դեպքերում վարկընկերությունները պետք է հանդես գան փոխոգկոմների բաշխելիք վարկերը ճիշտ ձևակերպողի դերում։

8. Փոխոգկոմները պետք է ընկերության անդամներից անհրաժեշտ թվով անդամագրեն վարկընկերություններին, ըստ որում փոկերը մուծում են վարկընկերությունները նրանց փոխարեն փայավճարներ։

9. Փոկերը և նրանց կից գործող վերստուգիչ հանձնաժողովները պետք է հսկեն, որպեսզի իրենց անդամները ստացած փոխատվությունները չգործադրեն նպատակից դուրս, և այդ նպատակով հսկողություն կատարեն իրենց անդամների միջոցով։

Վարկային ընկերությունների միջոցներից չքավորներին վարկավորելիս փոկերը պարտավոր են տալ վարկատու հիմնարկներին իրենց օբյեկտիվ յեզրակացությունը վարկի կարիք ունեցող տվյալ անհատի անձնական և տնտեսական հատկությունների վերաբերյալ, նրա ստացվածքի վարկի չափի մասին, այլ և վարկի գործադրման նպատակի, ժամկետի և վարկավորելու հնարավորության մասին՝ յերաշխիքներ։

10. Փոկերը պետք է մասնակցեն «չքավոր. ֆոնդերի» կազմակերպմանը, պետական և հասարակական միջոցներից հատկացնելով ըստ իրենց նյութական հնարավորության համապատասխան գումար՝ այդ նպատակով գյուղբանկում և վարկընկերություններում կազմակերպվելիք ֆոնդերին։

11. Փոկերը պետք է աշխատեն ուժեղացնել վարկային ըն-

կերությունների միջոցները, ի պահ տալով վերջիններիս իրենց ազատ դումարները, իբրև ավանդ։ Այդ նպատակով անհրաժեշտ համարել վորպեսզի փոկերը իրենց ունեցած ապրանքային ֆոնդերը դրամի վերածեն՝ կարևոր դեպքերում ոգտագործելով վարկընկերությունների ապարատը։ Վարկային ընկերությունները փոկերի առաջադրած խնդիրների կենսագործումը չթուլացնելու նպատակով, իրենց կողմից պետք է անպայմանորեն առանց ձգձգելու վերադարձնեն տրված ավանդները պահանջված ժամկետներում։

12. Փոկերի դրամական գործարքները (բանկային բնույթ կրող ոպերացիաները, այսինքն՝ փոխադրությունները, ինկասսո և այլն) ըստ հնարավորության պետք է կատարեն վարկային ընկերությունների և գյուղբանկի միջոցով։

13. Անհրաժեշտ է, վորպեսզի յուրաքանչյուր փոկ իր նյութական միջոցների սահմաններում անդամագրվի տեղական վարկընկերությանը։

14. Փոկերն իրենց անդամներին ոգնելու նպատակով պետք է ձգտեն ամեն կերպ, վորտեղ այդ հնարավոր է, ոգտագործել վարկընկերություններին կից գոյություն ունեցող ձեռնարկները, (տրակտորային բազա, սերմզտիչ կայան, վերանորոգող արհեստանոց և այլն)։ Միաժամանակ փոկերը հնարավոր ոժանդակություն են ցույց տալու այդ ձեռնարկություններին։

15. Անհրաժեշտ գտնել, վոր վարկընկերությունները հնարավորության սահմաններում վարկավորեն փոկերի արտադրական, գյուղատնտեսական բնույթ կրող ձեռնարկները։ Վարկավորման ասպարիզում փոկերն ոգտվելու յեն այն արտոնություններից, վորոնք սահմանված են գյուղատնտեսական կոլլեկտիվների համար։

16. Հանձնարարել Հայփոխոգկենտկոմին՝ Գյուղատնտեսական Բանկի հետ կնքել համաձայնագիր, վորը պետք է ընդգծի վարկային ընկերություններում փոխադարձ ոգնության կոմիտեների կողմից պահ տրվելիք գումարների և ավանդների պայմանները, այլ և վարկընկերությունների միջոցներից, ինչպես և փոկերի ֆոնդերից վարկեր տալու պայմանները։

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ի կատարումն փոխոգկոմների համահայաստանյան 2-րդ համագումարի այն վորոշումների, վոր վերաբերում են գյուղվարկի սխատեմի և փոխոգկոմների փոխհարաբերությունների, Հ.Ս.Խ.Հ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԸ, վորը հետագայում կոչվելու յե «ՀԱՅԳՅՈՒՂԲԱՆԿ» հանձինս իր վարչության նախագահ՝ ՌՈՒԲԵՆ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՍԱՖՐԱԶԲԵԿՅԱՆԻ մեկ կողմից և ՀԱՅԿԵՆՏՓՈԽՈԳԿՈՄԸ, վորը ստորև կոչվելու է «ԿԵՆՏՓՈԿ» հանձինս իր նախագահ՝ ԽՈՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ մյուս կողմից, կնքեցինք հետևյալ համաձայնագիրը.—

1. ԿԵՆՏՓՈԿԸ պարտավորվում է միջոցներ ձեռք առնել յերկու ամսվա ընթացքում, հաշվելով սույն համաձայնագիրը ստորագրելու որից, մուծել շրջաններում համապատասխան վարկ. ընկերությունների դրամարկղը փոխոգկոմների բոլոր ազատ դրամական միջոցները, իբրև ավանդ։

2. Գյուղատնտեսական ընթացիկ սեզոնի ժամանակամիջոցում ԿԵՆՏՓՈԿԸ պարտավոր է ռեալիզացիայի յենթարկել փոխոգկոմների այն ապրանքները, վորոնք արտադրական բնույթ չունեն և դրանից դուրսանալիք միջոցները նույնպես մուծել վարկ. ընկերությունների դրամարկղը, իբրև ավանդ։ Հայգյուղբանկը իր հերթին պարտավորվում է միջոցներ ձեռք առնել փոխոգկոմների կողմից դիմում լինելու դեպքում ապահովել վարկ. ընկերությունների աջակցությունը՝ հիշյալ ապրանքները հաջողությամբ վաճառելու, ոգտագործելով վարկ. ընկերությունների ապարատը, ըստ վորում վարկ. ընկերությունները ստանում են փոխոգկոմներից նրանց ապրանքները վաճառելու համար կատարված փաստացի ծախսերի հատուցումը։

Ծանոթություն.—Հանձնարարվում է ԿԵՆՏՓՈԿԻՆ հրատարակել այն ապրանքների ցանկը, վոր վաճառվելու յեն վարկ. ընկերությունների միջոցով։

3. Ավանդների համար գյուղվարկի սխատեմը վճարում է՝ անժամկետների համար 7%, առնվազն 6 ամիս ժամկետով՝ 8%, առնվազն մեկ տարի ժամկետով, 9%։ Փոխոգկոմների կողմից վարկ. ընկերություններին ավանդ տրվող բոլոր միջոցնե-

ը Հայգյուղբանկը ապահովում է ամենայն կորստից և պարտավորվում և կորստյան դեպքում գյուղբանկի դրամարկղից անմիջապես վճարել հիշյալ գումարները։ Միաժամանակ Հայգյուղբանկը յերաշխավորում է, վոր վարկ. ընկերությունները ավանդները ժամանակին վերադարձնեն։ Վարկ. ընկերությունների անճշտապահության յուրաքանչյուր դեպքում կենտրոկը տեղերից ստանալով համապատասխան տեղեկանք, անմիջապես հայտնում է Հայգյուղբանկին, վորը պարտավորվում է 24 ժամվա ընթացքում վճարել պահանջված գումարը։

4. Այն դեպքում, յեթե փոխոգկոմները ցանկանան ժամկետային ավանդը հետ ստանալ ժամկետից շուտ, պարտավոր են յերկու շաբաթ առաջ հայտնել այդ մասին վարկ. ընկերությանը։ Վերջին դեպքում տոկոսները հաշվում են անժամկետ ավանդների համար ընդունված չափով։

5. Կենտրոկը պարտավորվում է առաջիկա յերկու ամվա ընթացքում միջոցներ ձեռք առնել փոխոգկոմներին վարկ. ընկերություններում անդամագրելու, ըստ վորում փայավճարի նվազագույն չափը սահմանում են տվյալ փոկի դրամագլխի և անդամների թվի, սակայն վոչ պակաս քան անհատ անդամների փայավճարի կրկնապատիկ չափով։ Վարկ. ընկերությունների անդամ փոխոգկոմներն ոգտվում են այն բոլոր իրավունքներից, արտոնություններից և կատարում են այն բոլոր պարտականությունները, վոր նախատեսված են վարկ. ընկերությունների կանոնադրությամբ։

6. Գյուղբանկը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել, վոր վարկ. ընկերությունները նոր անդամներ ընդունեն գլխավորապես փոխոգկոմների անդամներից՝ փոխոգկոմների առաջարկությամբ, ըստ վորում փայավճարները մուծվում են այդ անհատների կողմից վարկ. ընկերությունների կանոնադրությամբ նախատեսված չափով։ Փոխոգկոմները, իրենց չքավոր անդամների համար, իրենց նյութական դրության համեմատ փայավճարներ են մուծում իրենց միջոցներից։

7. Փոխոգկոմների անդամների վարկավորման կարգը՝ փոխոգկոմների հաշվին, սահմանվում է հետևյալ ձևով.

ա. Այն դեպքում, յերբ փոխոգկոմը անհրաժեշտ համարի լրացուցիչ կերպով վարկավորել յուր անդամներին, վորոնք միաժամանակ և վարկ. ընկերության անդամ են, վարկ. ընկերությունը նախապես այդ մասին գրավոր առաջարկ ստանալով հա-

մապատասխան փոխոգկոմից և համաձայնության գալով վերջինս հետ վարկավորվող վարկի չափի մասին, վարկ և բաց անում նրա համար գյուղվարկի սխեմում ընդունված հիմունքներով, այն է՝ մատնանշելով վարկի նպատակը, ժամկետը, տոկոսաչափը (բայց վոչ ավելի, քան վարկ. ընկերությունների սահմանած տոկոսների չափը) և մյուս պայմանները, վոր նախատեսված են համապատասխան վարկերի համար։ Տրված գումարը համապատասխան փոխոգկոմի ընթացիկ հաշվից դուրս և գրվում, ըստ վորում փոխատվությունը ձևակերպելուց հետո, վարկ. ընկերությունները պարտագիր են տալիս փոխոգկոմին, վորպիսի պարտագիրը, ժամկետը լրանալուց հետո, վարկ. ընկերությունների կողմից մարվում է.

բ) Այն դեպքում, յերբ փոխոգկոմի անդամը վարկ. ընկերության անդամ չե, վարկ. ընկերությունը համաձայն «ա» կետի պայմանների, ձևակերպում է վարկը, վորը և համարվում է հանձնարարական գործառնություն։

Համապատասխան գումարի չափով արգելանք և գրվում ընթացիկ հաշվի վրա, ստացված պարտագիրը պահվում է ընկերության մոտ մինչև ժամկետը լրանալը։ Վարկ. ընկերությունները պարտավորվում են ամեն միջոց ձեռք առնել փոխատվությունը ժամկետին գանձելու համար, վորից հետո մատնանշված արգելանքը վերացվում է։

գ) Վարկ. ընկերությունն իր փոխատվությունների ու փոխառությունների համար տոկոս է վճարում, համաձայն գյուղվարկի սխեմում ընդունված դրույքների, ըստ վորում տոկոսների տարբերություն է ստանում յերկարատև փոխատվությունների համար՝ 2%, կարճատև փոխատվությունների համար 3% իր կազմակերպչական ծախքերը ծածկելու համար.

դ) Վարկ. ընկերությունը պարտավորվում է փոխոգկոմների առաջին խնդրանքի դեպքում հաշիվ տալ նրանց համար կատարած գործառնությունների մասին, իսկ ընդհանուր կարգով՝ ամիսը մեկ անգամ։

8. Չքավորությանը ցույց տրվող ոգնություն ուժեղացնելու նպատակով, կենտրոկը պարտավորվում է առաջին յերկու ամսվա ընթացքում միջոցներ ձեռք առնել, վոր յուրաքանչյուր փոխոգկոմ ամեն տարի յուր յեկամտային միջոցների 5%-ը մուծի վարկ. ընկերություններին առընթեր գործող «Չքավորության վարկավորման հատուկ ֆոնդը»։ Հիշյալ գումարների դիմաց

վարկ. ընկերությունները պարտավորվում են առնվազն յեռապատիկ չափով վարկեր տալ փոխոգկոմների այն չքավոր անդամներին, որոնք անդամակցում են վարկ. ընկերությանը, ըստ որում վարկավորվողների ընտրությունը կատարվում և համաձայն գերագույն մարմինների կողմից չքավորության վարկավորման ֆոնդերի մասին ընդունված կանոնադրության։

9. Կենտփոկը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել փոխոգկոմների դրամական գործառնությունները կատարելու վարկ. ընկերությունների միջոցով, յեթե միայն պայմանները նույնն են, ինչ մյուս վարկային կազմակերպություններում։

10. Յերկու կողմերն ել պարտավորվում են միջոցներ ձեռք առնել, որպեսզի այն վայրերում, որտեղ վարկընկերություններին և փոխոգկոմներին կից արտադրական կազմակերպություններ կան, նման կազմակերպություններ չըստեղծեն հակառակ կողմերին կից և իրենց ստորին ցանցի անդամների համապատասխան կարիքները հոգան վարկ. և փոխոգ. ընկերություններին կից գործող արտադրական կազմակերպությունների միջոցով։

Հայգյուղբանկը և կենտփոկը իրենց հերթին պարտավորվում են միջոցներ ձեռք առնել, որպեսզի վարկային և փոկի ստորին ցանցին առընթեր արտադրական կազմակերպությունները ոգնություն ցույց տան փոխոգկոմների անդամներին և վարկ. ընկերություններին այն պայմաններով և հիմունքներով, որոնք գոյություն ունեն յուրաքանչյուր կազմակերպության համար։

Միաժամանակ յերկու կողմերն ել միջոցներ են ձեռք առնում, որպեսզի տեղերի իրենց որգանները փոխադարձ աջակցություն ցույց տան արտադրական կազմակերպություններին նրանց գործունեության ասպարիզում։

11. Հայգյուղբանկը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել, որպեսզի փոխոգկոմներին առընթեր գործող արտադրական ձեռնարկությունները կարիքի դեպքում վարկավորվեն Գյուղվարկի սիստեմի կողմից հետևյալ պայմաններով.—

ա) Վարկ. ընկերությունների անդամ—փոխոգկոմները պարտավորվում են, յերկու ամսվա ընթացքում ներկայացնել վարկ. ընկերություններին 1926—27 թ. արտադրական ծրագիրը, սպասվելիք շահի մանրամասն պատճառաբանությունը և այն նկատառումները, որ կարող են ավելի ևս պարզաբանել հարցը։

բ) Վարկ. ընկերությունը համապատասխան փոխոգկոմի հետ միասին քննում են հիշյալ ծրագիրը և համաձայնեցնելով

միմիանց հետ, լրացուցիչ կերպով մտցնում են համապատասխան ընկերության ծրագրի մեջ և ուղարկում Հայգյուղբանկին։

Ծանոթություն.—Հետագայում փոխոգնությունների ծրագրերը ներկայացվում են այն ժամկետներին, յերբ վարկ. ընկերություններն են ներկայացնում իրենց ծրագրերը։

գ) Փոխոգնությունների արտադրական ծրագրերը վերջնականապես հաստատվում են Հայգյուղբանկի կողմից՝ համաձայնեցրված կենտրոնի հետ։

դ) Ծրագրերը հաստատելուց հետո, Հայգյուղբանկը համապատասխան վարկ է մտցնում վարկ. ընկերությունների ծրագրի մեջ։

յե) Փոխոգնությունները վարկավորվում են գյուղատնտեսական մասնագիտական ընկերությունների համար սահմանված հիմունքներով։

զ) Հայգյուղբանկն իր հաշվին վարկավորում է փոխոգնությունների այն արտադրական կազմակերպություններին, որոնց նպատակն է գյուղատնտեսական ասպարիզում ոգնել գյուղի չքավոր խավերին փոխադարձ ոգնության և հասարակական աշխատանքների հիմունքներով։

ը) Հայգյուղբանկն իր հաշվին վարկավորում է փոխոգնություններին նրանց հանձն առած պատասխանատվության սահմաններում, ի բացառյալ փոկերի այլ պարտավորությունները։

12. Գյուղատնտեսական Բանկը պարտավորվում է ձեռակերկերպել տեղերի վարկային մարմինների միջոցով փոխոգնությունների կողմից իրենց ընկերության անդամներին տված և ժամկետը չը լրացած բոլոր վարկերը, համաձայն սույն համաձայնագրի 7-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի։

13. Փոկերի և վարկ. ընկերությունների միջև գոյություն ունեցող նախկին բաց հաշիվներն ու պարտքերը չեն տարածվում նոր ավանդների ու գործառնությունների վրա, որոնք նախատեսված են սույն համաձայնագրի բովանդակությամբ։

14. Սույն համաձայնագրի իսկականը ստորագրվում է յերկու որինակից, որոնցից մեկը պահվում է Գյուղբանկի գործերում, իսկ մյուսը կենտրոնի գործերում։

Գյուղատնտեսական Բանկի
Վարչության Նախագահ՝
Գ. ՍԱՖԱՐՅԱՆՑ

Սոցապժողկոմ յեվ Հայխոսգկենտրոնի Նախագահ՝
Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՆՈՒ ՊԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Գ 23789

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003092

[054.]

A II 23769